ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07.10.2019թ.
Ժամը 14[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թունյան,
Բացակայում է՝
ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչության ինժեներաավիացիոն բաժնի ավագ ինժեներ, փոխգնդապետ Ա. Գասպարյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, այն է՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Ուստի գնահատող հանձնաժողովը 24.10.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթղթերը, սակայն դրանցում առկա են թերություններ, մասնավորապես՝ ներկայացված պայմանագրերից որպես նմանատիպ համարվող է գնահատվել միայն մեկը, որի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում միայն 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 30.10.2019թ. մերժել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին):

Քանի որ 21.10.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 6-րդ չափաբաժնի մասով:

1.2 30.10.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները 6-րդ չափաբաժնի մասով գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից 6-րդ չափաբաժնի մասով:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-23/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ա. Համբարյան
Գնահատող	Է. Թունյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան